ՀՀ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանին

Հայաստանի Հանրային Ռադիոյի

Լոռու մարզի թղթակից Լուսինե Սարգսյանից

/լրագրող, ք.Վանաձոր /

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Խաչատրյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասի» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի վերաբերյալ:

1.Լոռու մարզում 2022 թվականի մայիս-հունիս ժամանակահատվածում մարզի ո՞ր համայնքներն են տուժել կարկտահարությունից,

2. Ընդհանուր առմամբ որքա՞ն է կազմում վնասի չափը, հատկապես ի՞նչն է տուժել (հացահատիկի և այլ մշակաբույսերի ցանքատարածություններ, բերքատու ծառեր, շինություններ, այլ կառույցներ),

3. Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել Լոռու մարզպետարանի կողմից՝ տուժած համայնքների վնասի չափերը գնահատելու, բնակիչներին փոխհատուցում տրամադրելու ուղղությամբ

4. Լոռու մարզի տարածքում քանի՞ հակակարկտային կայան կա տեղադրված և որտե՞ղ են դրանք տեղադրված

5. Ե՞րբ և որքա՞ն ֆինասնավորմամբ են տեղադրվել վերոնշյալ հակակարկտային կայանները

6. Արդյո՞ք ներկայում դրանք շահագործվում են, թե՞ ոչ

7. Եթե չեն շահագործվում, ապա ո՞րն է պատճառը

8. Լոռու մարզում գործո՞ւմ է հակակարկտային ցանցերի արտադրամաս, եթե այո, ո՞ր համայնքում և ի՞նչ արտադրողականությամբ

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն

ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Միաժամանակ, թեմայի շուրջ խնդրում եմ մեկնաբանություն համապատասխան պաշտոնյայից՝ հարցազրույցի տեսքով՝ ռադիոռեպորտաժում ներառելու համար:

Կանխավ շնորհակալ եմ՝

Լուսինե Սարգսյան

06.07.2022 թվական